


24353



ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ  
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ  
ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ  
ԽՈՐՃՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ա. ՈՐՁՈՆՆԻԿԻԶԵ

ՄԵԾ ԱՏԱԼԻՆԻ  
ԳԼԽԱՎՈՐԱԾ  
ԱՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ  
ԿԸՆԹԱՆԱ  
ՅՈՐՄԴՈՆԱՆՈՑ ՔԱՅԼԵՐՈՎ



ՀԿ(Պ)Կ ԿԵ ԽՈԽՈՎՐՈՒՄ • ՕԵՐԵՎԱՆ

15 JAN 19

331.87

O-95

ար

Պրոլետարիներ բոլոր յերկիքների, միացեք

ԱՍԽԱՆՈՎԱԿԱՆ  
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ  
ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՈՐՉՈՆ ԻԿԻԶԵ

ՄԵԾ ԱՏԱԼԻՆԻ  
ԳԼԽԱՎՈՐԱԾ  
ԱՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ  
ԿԸՆԹԱՆԱ  
ՅՈԹՄԴՈՆԱՆՈՑ ՔԱՅԼԵՐՈՎ

4 SEP 2013

24353

Խմբագիր Հ. Պասպարյան  
Թարգ. Մ. Զաքարյան  
Սըբագրիչ Վ. Զիգեզյան



Գլուխիստի լիտղոր Ը-89, հրտակ. № 334  
Պատվիր № 396 աիրաժ 12,000, ինդեքս Ռ-80



Հայկուսհրատի տպարտն, Յերևան  
Ալմահերդյան № 27



1069

37

С. ОРДЖОНИКИДЗЕ  
Стахановское движение  
возглавляемое великим  
Сталиным, идет семимильными  
шагами

Армпартнадат, Эревань, 1935

Նոյեմբերի 14-ին Կրեմլի պալատի Մեծ դահլիճում  
բացվեց արդյունաբերության և տրանսպորտի ստախանո-  
վական բանվորների ու բանվորուհիների համամիութենա-  
կան առաջին խորհրդակցությունը:

Խորհրդակցությանը մասնակցում են ծանր, թեթև,  
մենդի և անտառային արդյունաբերության բոլոր ճյուղերի  
ու յերկաթուղային տրանսպորտի 3000 առաջավոր հարդա-  
ծայիններ ու հարվածայնություններ:

Խորհրդակցության մասնակիցները փոթորկալից ովա-  
ցիաներով են դիմավորում տրիբունի վրա բարձրացալ ըն-  
կերներ Ստալինին, Մոլոտովին, Կարգանովիչին, Որջոնիկի-  
ձեյին, Վորոշիլովին, Կալինինին, Անդրեյևին, Միկոյա-  
նին, Չուբարյան, Ժուկովին, Խրուչչևին:

Լսվում են բացականչություններ՝ «Կեցցե մեր մեծ ա-  
ռաջնորդ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին բոլշևիկյան  
ստախանովյան վողջույն» (Ուռա՛, ծափահարություն):  
«Կեցցե ընկեր Մոլոտովը» (Ուռա՛, ծափահարություն):  
«Կեցցե ընկեր Որջոնիկիձեն», (Ուռա՛, ծափահարություն):  
«Կեցցե ընկեր Կարգանովիչը» (Ուռա՛, ծափահարություն):  
«Ուռա՛ ընկեր Վորոշիլովին», «Ընկեր Կալինինին ուռա՛»  
(Ուռա՛, ծափահարություն): «Կեցցե մեծ հաղթանակների  
կազմակերպիչ ընկեր Ստալինը» (Ուռա՛, ծափահարու-  
թյուն): «Կեցցե մեր սիրելի, մեր հարազատ ընկեր Ստալի-  
նը» (Ուռա՛, ծափահարություններ):

Յերկար ժամանակ լավում են վողջույնի բացականչությունները և աղմկալի ովացիանները։ Ընկեր Որջոնիկիձեն, վորին դիմավորում են յերկարատև ծափահարությամբ, բացված ե հայտարարում ստախանովական բանվորների և բանվորուհիների համամիութենական առաջին խորհրդակցությունը։

## ՃԱՌ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(14 նոյեմբերի 1935 թ.)

Ընկերներ, այն, ինչ ավելին մեղ Ստախանովը, Դյունկանովը, Բուսիդինը, Վինոգրադովան ու Կրիվոնոսը յերկաթուղում, և այն հանդամանքը, վոր հարյուրավոր ու հազարավոր մարդիկ հետեւցին նրանց որինակին—սա արտակարդ փաստ է, հսկայական կարևորություն ունեցող փաստ։ Պետք է ուղղակի ասել, վոր այն, ինչ մինչև այժմ «գիտնական» մարդիկ և հին ոլրակտիկները սրբագրութել եյին ամեն տեսակ «գիտական նորմաններով», մեր այդ ստախանովական ընկերներն այդ ամբողջ գլխիվայր շուռ տվին և դեն գցեցին վլրպես հնացած և մեր առաջընթացը դանդաղեցնող բան։

Իսկ ի՞նչ են արել այդ ընկերները։ Նրանք արել են այն, ինչ պահանջում եր մեղանից մեծագույն մարդկանցից մեծագույնը, մեր կուսակցության կազմակերպիչը և մեր ուսուցիչը՝ Լենինը, նրանք արել են այն, ինչ պահանջում եր Լենինի մեծ աշակերտ ու նրա գործը շարունակող, մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը։ (Բուռն ծափահարություն)։

Այս տարի մայիսին, Կարմիր բանակի ակադեմիական-ների ավարտման հանդեսին ընկ. Ստալինն ասաց. «կտղրերն են վորոշում ամեն ինչ»։ նա ասաց. «տեխնիկան տեխնիկային տիրապետած մարդկանց գլխավորությամբ կարող

և հրաշքներ գործել և պետք ե գործի։ Յեթե մեր առաջնակարգ գործարաններում ու Փաբրիկաններում, մեր խորհրդնակություններում ու կոլտնտեսություններում, մեր կարմիր բանակում լինելին այդ տեխնիկան թամբելու ընդունակ բավական թվով կադրեր, մեր յերկիրը յեռավատիկ և քառակատիկ ավելի արգյունք կստանար, քան նա ունի այժմ»։

Այս խոսքները կուսակցության առաջնորդն ասել և այս առարի մայիսին։

Անցնում ե չորս ամիս, և ահա ոգոստոսի 30-ին Դոնքասի «Յենտրալայայա Իրմինո» հանքահորում շարքային հանքահատ Ալեքսեյ Ստախանովն իր ածխահատ մուրձի հարվածով՝ նորմայով յոթ տոննի վոխարեն վեց ժամվահերթակության միջոցին կտրում և 102 տոնն ածուխ։ Այս եր առաջին պատասխանն առաջնորդի կոչին։ (Ծափահարություն)։

Սա անում ե վոչ կուսակցական բոլցեիկը, վորը գեռ կուսակցական տոմս չունի և ձեւականորեն կուսակցության մեջ չե, բայց հանդիսանում է իր պրոլետարական պետության հավատարիմ զավակը, և նրան կուսակցությունից վոչինչ չի անջատում բացի այն բանից, վոր գեռ նրա զըրպանում կուսակցական տոմս չկա։

Մի յերկու որից հետո, սեպտեմբերի 3-ին նույն աշխատամասի կուսակցակերպիչ Դյուկանովը հանքահոր և իջնում և վեց ժամվահերթակության ընթացքում կտրում 115 տոնն ածուխ—սա կուսակցական բոլցեիկի յերկրորդ պատասխանն և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկեր Ստալինի կոչին։ (Ծափահարություն)։

Սեպտեմբերի 19-ին Գորկու ավտովործարանում վոչ կուսակցական բոլցեիկ դաբրին ընկ. Բուսիգինն իր մուրճով կոփելով 1050 ծնկավոր առանցք՝ նորմայով սահմանված 675 առանցքի վոխարեն, կրկին հաստատեց, վոր ընկեր

Ստալինը լրիվ ու ամբողջովին իրավացի յե։ (Ծափահարություն)։

Մոտավորապես նույն ժամանակ Դոնբասում մեքենավար ընկ. Կրիվոնոսը, յուրացնելով Ալեքսեյ Ստախանովինախաձեռնությունը, տալիս ե չողեքարշի յերթեկնության արագության փայլուն որինակ՝ նորմայի, այն ե՝ 30 կիլոմետրի փոխարեն, նա տալիս ե 53 կիլոմետր։ (Ծափեր)։

Ստախանովյան շարժումն ընդարձակվում ե։

Վեջուգում ջուլհակների Դուսյա և Մարիա Վինոգրավովաները, փոխանակ նորմայով սահմանված 16—24 դաշտյանի վրա աշխատելու, սկսում են աշխատել 70—100, իսկ այժմ 144 դաշտյանի վրա։ (Ծափահարություն)։

Այդ առաջավորների հետեւյց արդյունաբերության ու տրանսպորտի բոլոր ճյուղերում վոտքի յեն յելնում առաջավոր հարվածայինների ու հարվածայնուհիների լայն մասնակիությունը, ցույց տալով աշխատանքի բարձր արտադրությականության նմուշներ։

Այսպես պատասխանեց մեր հայրենիքի բանվոր դաստիարակն իր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի այս տարի մայիսին արտասահմանած ճանապարհությունում նմուշներ։

Ընկերներ, այսոր լրագրերում դուք կարդացիք Վրանցելի ջախջախման 15-ամյակի մասին։ Այնտեղ դուք տեսնում եք ընկեր Ստալինին, վորագես այդ հաղթանակի կտղմակերպիչն ու դեկավարը։ Ինչպես քաղաքացիական պատերազմի այդ գժնդակ տարիներին, Լենինի և Ստալինի կոչով այն ամենը, ինչ լավագույնն եր յերկրում, զնում եր ջախջախելու խորհրդային իշխանության թշնամիներին, այնպես ել սոցիալիզմի ծավալուն շինարարության տարիներին ընկեր Ստալինի կոչով վոտքի յեն կանգնում մեր բանվորների ու կոլտնտեսականների, ինժեներների, տեխնիկների, բոլոր աշխատավորների միջոնավոր մասսաները՝ սոցիալիզմը հաղթականորեն կառուցելու համար։

Ծափալող ստախանովյան շարժումը հրաժանաւարների՝ կազմակերպիչների, ինժեներների, տեխնիկների առջև նոր ինդիբրներ և զնում՝ արտադրության բոլոր ողակները՝ կազմակերպելու աշխատանքի արտադրողականության հրայական աճման համապատասխան։

Այնինչ տնտեսավարների և ինժեներա-տեխնիկական աշխատաղների վորոշ մասում զգացվում է շփոթություն։ Նրանք չեն կարողանում միշտ գլխավորել ստախանովականներին և համապատասխանորեն վերակառուցել արտադրության կազմակերպումը։ Այսում են նաև այնպիսի այբանդակ գեպքեր, յերբ վոչ միայն չեն ողնում ստախանովականներին, այլև անթույլատրեկի, ուղղակի խուլգանական վերաբերմունք են ցույց տալիս նրանց։ Այսպիսի արն-տեսավարներն ու ինժեներներն արժանի չեն դանվելու մեր սոցիալիստական արդյունաբերության հրամանաւարական պաշտոններում։

Կան նաև այնպիսիները, վորոնք պատրաստ են ծափակարելու և ծափահարում են ստախանովյան շարժմանը, բայց չեն ուղում անհրաժեշտ յեղակացություններ անել, այն ե՝ ավելացնել արտադրանքն այն նոր հնարավորությունների համաձայն, վոր ստեղծում ե հարածուն ստախանովյան շարժումը և մինչև այժմ ել դեռ խճճվում են այսպես կոչված «տեխնիկապես հիմնավորված նորմաների» և «նախագծային կարողությունների» շուրջը։ Այսպես չի մնի, ընկերներ։

Եերեկ յես հարց ու վորձ եյի անում Դոնիբասի ընկերներին. դե ինչպես ե ընկերներ, դուք արտադրում եք ածխի 2-3 նորմա, բայց կարելի՞ յե արդյոք ածիրի 2-3 անդամ ավելացած այդ արտադրանքը մակերես հանել։ Նըրանք ասում են՝ կարելի յե, սակայն պետք ե կարել նեղ տեղերը, պետք ե մեքենայացնել ածուխը մակերես հանելու գործը։ Աս բացարձակապես ճշշտ ե։

Մեր յերկիրը գտնվում է մի նոր, սուր վերելքի ճառապացին:

Մեր արդյունաբերության մեջ ներդրված հոկայտկան միջոցները, առաջնակարդ տեխնիկայով զինված մեր ձեռնարկությունները Ստալինի դաստիարակած և այդ առաջավոր տեխնիկային տիրապետող միլիոնավոր բանվորների, ճարտարագետների ու տնտեսավարների ձեռքում հրաշալի արդյունքներ են տալիս:

Ստախանովյան շարժումը դառնում է սոցիալիստական հայրենիքի հավատարիմ դավակների խակական ժողովրդական շարժում:

Բոլոր տնտեսավարների, ինժեներների, տեխնիկների—արտադրության բոլոր իսկական հրամանատարների—խոնդիրն ե՝ մեր բոլցեկիյան կուսակցության ղեկավարությամբ գլխավորել այդ շարժումը և առաջ զնալ գեալի նստանոր հաղթանակներ սոցիալիտիմի կառուցման ճանապարհին: Ավելի պատվավոր խնդիր չկա և չի կարող լինել սոցիալիստական արդյունաբերության, տրանսպորտի և սոցիալիստական յերկրագործության հրամանատարի համար: Յեկամ ժամանակ մենք զեռ շատ անդամ կդանք ընկեր Ստալինի մոռու հպարտորեն և ուրախալից հաղորդագրություններով, թե ինչպես մենք բոլցեկիկորեն ենք կենսագործում նրա ցուցումները: (Ամբողջ խորհրդակցությունը ծնափակարություն է բուներեն և յերկար):

Համեկ(բ)կ կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմիորհի հանձնարարությամբ արդյունաբերության ու տրանսպորտի ստախանովական բանվորների ու բանվորուհիների համամիութենական առաջին խորհրդակցությունը հայտարարում եք բացէած:

## ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՀԱՐԺՈՒՄԸ ԿԸՆԹԱՆԱ ՑՈԹՄՂՈՆԱՆՈՑ ՔԱՅԼԵՐՈՎ

(Ճառ խորհրդակցության՝ 1935 թ. նոյեմբերի 15-ին)

1 ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՆՈՐՄԱՆԵՐԸ ԵՆ—ԵԵՆԻՒ—ՍՏԱԼԻՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ընկերներ, յես հաշվետու տվյալներ չեմ բերի ծանր արդյունաբերության աշխատանքի մասին, վորովհետեւ այս հարցը չեմ, վոր այժմ զրված է որակարգում: Այս տարվա պլանը ծանր արդյունաբերությունը կդերակատարի: (Ծափահարություն): Դեռ ավելին՝ ծանր արդյունաբերության առանձին ճյուղեր և առանձին ճեղնարկություններ հնդամյակը կկատարին չորս տարում: (Ծափահարություն): Դեռ ավելին՝ Կրիվոյ Ռոգի հանքերը, վորոնք հանքաքար են տալիս մեր հարավային սև մետալուրգիային, հնդամյակը կատարեցին յերեք տարում: (Ծափահարություն): Յերկրորդ հնդամյակն ամբողջովին վերցրած ծանր արդյունաբերությունն անպայման կկատարի ժամկետից առաջ: (Ծափահարություն):

Սակայն այժմ խոսքը որա մասին չեմ: Ընկեր Ստալինը մեզ միշտ ասել ե, վոր պլանը նվազագույնն ե այն բանի, թիչ պետք ե անպայման կատարվի: Իսկ հետադայում, կատարման ընթացքում, պլանի մեջ ուղղամներ պետք ե մրցվեն: Ահա այսոր թերթեցում մենք կարդում ենք, վոր մեր պղնձարդյունաբերությունը կատարել ե իր տարեկան պլանը,—տարին դեռ չի վերջացել, իսկ պլանը կատարվել ե: Մի յերկու տարի առաջ սա ամենահետամնաց արդյունաբերությունն եր: Ի՞նչ կատարվեց այժմ: Նո որինակելի՞ յի դարձել: Յես չեմ կարող ասել, թե պղնձարդյունաբերության աշխատողներն այժմ լավ չեն աշխատում: Լավ են աշխատում: Սակայն, յեթե նրանք պլանը

կատարել են յերկու ամիս առվելի վաղ, այս նշանակում են, թե պլանը նվազագույնն եր: Սրանով յես բնակչությունը ուղղում վորենք չափով նվազեցնել այդ ասպարեզում աշխատով ընկերների նշանակությունը:

Մեր առջև դրված են հսկայական կարեռություն ունեցող մի հարց: Ստախանովյան շարժումը: Ի՞նչ բան են այդ: Ի՞նչ տեղի ունեցավ: Ահավասիկ մինչև այժմ մենք տըքնում, քարչ եյինք զալիս ածիսի հանույթի կաղմակերպման դործում և վոչ մի կերպ չեյինք կարողանում 6—7 տոնենից տվելի տալ մի հանքահատ մուրճով: Շարունակ դեռ ու դեն եյինք ընկում, վոչինչ դուրս չեր դալիս: Փնտում եյինք մյուս յերկրներում, թե ինչ վիճակի մեջ ե դործը, վորքան են տալիս նրանք: Պարզվում ե, վոր մուրճում տալիս են 14, Անդիայում՝ 11 տոնն: Մեզ մոտ մի հանքահատ մուրճի նորման վեց տոնն եր: Յեվ ահա մի գեղեցիկ որ, ընկեր Ստախանովը, մեր յերկրի այժմյան հերոսը, 102 տոնն տվեց մեկ հանքահատ մուրճով: Յերբեմն կարծում են, թե մի մարդ և տվել 102 տոնն: Այդ սխալ ե: Ամբողջ բրիդագն ե տվել 102 տոնն: Ստախանովին հետեւեցին ուժիչները, առլով և' 200, և' 300, և' 400, և, վերջապես 552 տոնն: Ինչպես կատարվեց այդ: Ի՞նչ պատահեց: Ի՞նչ ե, իսկապես, նրանք բոլորը, ովքեր դեկավարում եյին, կատարյալ ախմարներ եյին, վոչինչ չեյին հասկանում: Իհարկե, վոչ: Մենք գործ ունենք պատմական հսկայական նշանակություն ունեցող մի այլ յերեսույթի հետ:

Վաղիմիր իլիչ Լենինը 1919 թվականին առում եր.

Աշխատանքի արտադրողականությունը, ուս վերջին հաշվով ամենակարևորն ե, ամենադըմավորը նոր հասարակակարգի հաղթանակի համար: Կապիտալիզմն ստեղծեց ճորտատիրության ժամանակ չտեսնված աշխատանքի արտադրողականություն: Կապիտալիզմը կարելի յե վերջնականապես հաղթել և վերջնականապես

կհաղթվի նրանով, վոր սոցիալիզմը կստեղծի աշխատանքի նոր, շատ ավելի բարձր արտադրողականություն»:

«Կոմունիզմը կամավոր, գիտակից, միացած, առաջավոր տեխնիկան ողտադործող բանվորների աշխատանքի բարձրագույն արտադրողականությունն ենդդեմ կապիտալիստականի»:

Ահա այս եր ասել մեր կուսակցության հիմնադիր, Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ, մեր ուսուցիչ ընկեր Լենինը՝ 1919 թվականին: (Ծափահարություն):

1930 թվականին նրա աշակերտը, մեր բոլորի պաշտեմն, մեր Ստալինը, կուսակցության 16-րդ համազումաբում տված իր հաշվետու զեկուցման մեջ ասաց՝

«Միմիայն կույրերը չեն տեսնում, վոր մասսաների հոգեբանության մեջ և նրանց վերաբերմունքի մեջ զեղի աշխատանքը տեղի յե ունեցել հսկայական բեկում, վորն արմատապես փոխել ե մեր գործարանների ու Փաբրիկների կերպարաննքը...»

Մրցության մեջ ամենանշանակուրն այն ե, վոր այն արմատական հեղաշրջում ե առաջացնում աշխատանքի նկատմամբ՝ մարդկանց հայցքների մեջ, վորովհետեւ մրցությունն աշխատանքն անդամավաբեր և ծանր լծից, ինչպիսին համարյում եր նա տուած, դարձնում և պատվի գործ, փառքի գործ, արիության ու հերսության գործ»: (Ծափահարություն):

Լենկերներ Ստախանովը, Բուսիկինը, Դյուկանովը, Կրիվոնոսը, Վինոգրադովաները, ի կատարումն Լենինի ու Ստալինի այս դրույթների, տվին աշխատանքի արտադրողականության նմուշներ, հետ թողնելով կապիտալիստական յերկրների բոլոր նորմաները: Առանց աշխատանքի արտադրողականության այսպիսի աճման, ինչպես այս մասին խոսում են Լենին ու Ստալինը, մենք չենք կարող հասնել

կապիտալիստական առաջավոր յերկիրներին ու անցնել նըանցից և այնքան հարուստ դարձնել յերկիրը, վոր մեր յերկրի բոլոր աշխատավորների համար ապահովենք իրոք անեռոր և հարուստ կյանք :

Իրոք, յեթե աշխատանքի արտադրողականությունը չբարձրանա, յեթե յերկիրը հարուստ չդառնա, տալս ել ի՞նչ սոցիալիզմ : Մի՞թե սոցիալիզմը կարող է հիմնվել չքավորության վրա, աղքատության վրա : Յերբեք : Սոցիալիզմը միայն այն ժամանակ կարող է վերջնական հաղթանակ տանել, յերբ դառնա լիարյուն, հարուստ, հզոր, յերբ ամբողջ ազգաբնակությունն ապրի այնպես, ինչպես վայել և սոցիալիստական յերկրի քաղաքացիներին : Իսկ Ստախանովները մեզ տալիս են աշխատանքի արտադրողականության այսպիսի աճում :

Մենք, անտարակույս, թեակոխել ենք մեր զարդացման այն ըրջանը, յերբ հնարավորություն կունենանք լիովին ու ամբողջովին ապահովելու մեր քաղաքացիներին այնպես, ինչպես վոչ մի տեղ աշխարհում :

Իրոք, տեսե՛ք, թե ինչ պատահեց . մենք յինթադրում ենք և մեր բոլոր հաշվարկումներով հաստատված եր, վոր Դոնբասը ներկայումս ունեցած իր հանքահորերով կարող է տալ տարեկան 107 միլիոն տոնն ածուխ, ավելի չի կարող տալ, իսկ ստախանովյան մեթոդով, արտադրական ամբողջ պրոցեսը պատշաճ կերպով կաղմակերպելով, այս թիվը կարելի յե կրինապատկել : Սա հսկայական նվաճում կլինի : Սա հնարավորություն կտա հսկայական միջոցներ աղատել նույն այդ Դոնբասի համար, նրա բանվորների, ինժեներ-տեխնիկական ուժերի, — բոլոր աշխատավորների կյանքի հետալար բարելավման համար :

Բայց այստեղ կարող են այսպիսի հարց տալ՝ ստամանն տանի, իսկ ինչպես պատահեց այս, ինչպես ե, վոր մինչ այժմ մենք այս չեցինք տեսնում :

Ի՞նչ կարող ես անել: Այս գործն ինչպես հարկն ե ծավալելու համար, այս գործը չդանդաղեցնելու համար—իսկ առայժմ դանդաղում ե—պետք ե ազնվորեն խոստովանել, վոր մեղ ծանոթ չեյին այն բոլոր հնարավորությունները, վոր այժմ գտնվում են մեր արամադրության տակ:

Վորոշ ընկերներ՝ ծանր արդյունաբերության և արդյունաբերության այլ ճյուղերի դիրքետորներ, ինժեներներ կարող են առել՝ սրանց տեսե՛ք, այժմ մեղ կույր հայտարարեցին: Ամենակի՛ն վոչ: Մենք սուղծեցինք ամենահրակայական արդյունաբերություն: Մենք կառուցեցինք առաջնակարգ ինդուստրիա: Մենք կառուցեցինք առաջնակարգ գործարաններ և Փարբիկաներ: Սա մեր կուսակցության գործն է, մեր բանվորների, ինժեներների, տեխնիկների, տնտեսակարների գործն է: Ինկեր Ստալինը գուր չեր նշում շինարարության այն պամուռ, վոր հնարավորություն տվեց առաջին հնդամյակը կատարելու չորս տարում և պահանջում եր մեղանից այն լրացնել յուրացմտն պաթոսով:

Այս յուրացման համար մղվող պայքարը, վորին ներգրավվեցին բանվորական մասսաները, մեղ հնարավորություն տվեց չուռ տալու մեր հնացած նորմաները: Իսկ մեր նորմաները հնացել եյին այն պատճառով, վոր մեր նորմավորողները սովորել են մեր հին պրոֆեսորների մոտ, մեր հին գիտնականների մոտ, վորոնք բոլորն ել իրենց հերթին սովորել են հին, մինչհեղափոխական Ծոլսաստանում, յեւնելով հին, հետամնաց տեխնիկայից :

Լավագույն գեպօւմ այդ նորմաները վերցնում եյին արտասահմանից, կապիտալիստական յերկիրների փորձից:

Ստախանովն անցավ մեր բոլոր գիտնականներից, Յեվրոպայի ու Ամերիկայի գիտնականներից: Ածխի ստախանովյան նորման ամերիկյան նորմայիցն ել բարձր ե:

Այնուհետև վերցնենք ահա այս հրաշալի ընկեր Վինո-

զբաղովային, նաև նույնպես վերջնականապես անցել և բոլորից թե՛ մեր, թե՛ յեվրոպական, թե՛ ամերիկյան գիտ-նականներից : (Մափահարություն) :

Այստեղ հանդես յեկան պողպատագործ ընկերներ Դեկտյարովը՝ Զերժինսկու անվան մետաղաձուլական գործարանից և ընկ. Բորիլյովը՝ Տաղանրովի Անդրեյևի անվան մետաղաձուլական գործարանից, և խոսեցին իրենց վայրուն նվաճումների մասին, հնոցի հատակի մի քառակուսի մետրից 11 և ավելի տոնն ստանալու մասին, վոր նույնպես հետ և թողնում մինչև այժմ մեզ հայտնի յեվրոպական ու ամերիկյան նորմաները : Նույնպիսի մեծ հաջողությունների մասին կարող են պատմել մեր մյուս գործարանների պողպատագործները, հնոցավարները և գլանիչները :

Ինչպես տեսնում եք, Հին նորմաները ջախջախիւցին : Ինչու : Հենց այն պատճառով, վոր դժոնք կապիտալիստական նորմաներ եյին, իսկ ստախանովականների նորմաները Հոկտեմբերյան հեղափոխության նորմաներն են, և ենինի ու Ստալինի նորմաները : (Բուռն ծափահարություն) :

Ընկեր Լենինն ասել ե՝

«...Կապիտալիզմն ստեղծել և ճորտատիրություն ժամանակ չտեսնված աշխատանքի արտադրողականություն : Կապիտալիզմը կարելի յե վերջնականապես հաղթել և վերջնականապես կհաղթվի նրանով, վոր սոցիստիզմը կստեղծի աշխատանքի նոր, շատ ավելի բարձր արտադրողականություն» :

Ահա աշխատանքի այս նոր, շատ ավելի բարձր, սոցիստական արտադրողականությունն են ստեղծում Ստախանովը և ստախանովականները : (Մափահարություն) :

Ի՞նչ հետևություն և բղխում սրանից : Պեք և վերանայել բոլոր գասաղրեքերը և նոր կազմել : (Միծառ, ծափահարություն) : Բոլոր գասաղրեքերը :

Այս հաստատելու համար յես մի քաղվացք կվերցնեմ ակաղեմիկ Պավլովի այն զեկուցումից, վոր նա տվել է Մազնիտոգրսկի գործարանում 1932 թվականին : Այս ակաղեմիկը ուռւսական մետաղուրդների հայրն է : Ուռւսաստանում կրթություն ստացած համարյա բոլոր մետաղուրդները Պավլովի աշակերտներն են, իսկ Պավլովը պնդում էր, թե

«... 900 խ. մ. ոգտակար ծավալ ունեցող հնոցի հաշվարկային կամ անվանական արտադրողականությունը յես ստհմանում եմ 750 տոնն, ընդունելով, վոր ծավալի ոգտադործման գործակիցը հավասար ե 1, 2-ի : Այս թիվը յես մատնացույց եմ արել առաջ կրիվոյ թուղի հարուստ (56—58 տոկոս) հանքով աշխատելու պայմաններում, վոր ձուլման նախապատրաստված և մանրացումով, ջոկված և մանրություն ու փոշուց, վոր յեփվում և դառնում են աղլումերատ : Իհարկէ աշխատանքի նպատակը պայմաններում այդ գործակիցը կարելի յե գերադանցել՝ միանգամայն հնարավոր և ծավալի տվելի լավ ոգտագործում, վորը տա որինակ՝ 1,05 գործակից, վորին հասել են ԱՄՆ-ում, միծ արտադրողականություն ունեցող հնոցներում, բայց յես խորհուրդ չեմ տալիս հնոցի չափը վորոշելիս ոգտվել հնարավոր լավագույն գործակիցներից» :

Ի՞նչ անենք ուրեմն այժմ : Ակաղեմիկ Պավլովը և նրա աշխակերտները զասավանուում են մեր բոլոր ուսումնական հաստատություններում և սովորեցնուում են մեր ապադարձեններներին, վորոնք պետք և զեկավարեն հնոցների աշխատանքը : Ակաղեմիկ Պավլովը մեծ հեղինակություն ունի մետաղուրդների մեջ : Յեկանական միջնադարությունում մեր Սակայելկայի հնոցը, ինչպես զեկուցեց այսուել ընկեր Պուշկինը, տալիս է 0,87 գործակից : Ահա ձեզ ակաղեմիկի դասաղեմիկի, այլ Հոկտեմբեր-

յան հեղափոխության զավակ ընկեր Պուշկինի պրակտիկան :  
(Ծափահարություն) :

Ես ավելին կամեմ : Մակեյելայի գործարանը բոլորին  
հայտնի, լավ գործարան ե, նա չառ լավ ե առաջ տանում  
աշխատանքը : Բայց ահա վերջերս յես տեսա կերչի գործա-  
րանի աշխատողներին : Այդ գործարանն աշխատում ե կերչի  
աղքատ հանքի վրա : Բառացի բոլորն ել կարծում եին, թէ  
կերչի գործարանի հնոցների համար գործակիցը 1,50 ե :  
Բայց ահա այնտեղ վարպետ իշկովը կերչի գործարանի հնո-  
ցում տվել ե 0,99 գործակից, գործարանը խոստացել ե բո-  
լոր հնոցներում տալ 1,1-ից վոչ ավելի գործակից : Ահա ձեզ  
դարձյալ մի որինակ :

Ակադեմիկ Պավոսիք 1, 2 գործակիցին համնելու անհրա-  
ժեշտ պայմանն ե համարում ագլոմերացված հանքաքարը,  
բայց ահա Դնեպրոպետրովսկում Պետրովսկու անվան հին  
մեքնայացված գործարանը առանց վորևե ագլոմերացիայի  
տալիս ե 1,10, 1,12 գործակից : Նույնը նաև Ստալինյան  
գործարանը, Զերժինկան, Վորոշիլովյան գործարանը, ել  
չխոսելով Մադիտակայի և Կուլյնեցիի մասին, վորոնք շուր  
տվին այդ հին նորման :

Արդյոք, ընկերներ, այս նշանակում ե, վոր մենք այլ-  
և չենք սովորելու կապիտալիստական յերկիրների տեխ-  
նիկայից : Իհարկե, չի նշանակում : Այն բոլորը, ինչ նրանց  
մոտ առաջալոր ե, այն բոլորը ինչ նրանց մոտ լույլ ե մենք  
վերցնելու յենք նրանցից, բայց հաստատալես սիրտի հի-  
շենք, վոր կապիտալիստական յերկիրների նորմաները մեզ  
համար սահման չեն, և մենք, համնելով այդ նորմաներին,  
առաջ կզնանք մեր ճանապարհով, ինինի ու Ստալինի ճա-  
նապարհով : (Յերկարան ծափահարություն) :

Այստեղ մենք ականատես յեղանք պողպատագործ ըն-  
կերներ Դեկտյարովի և Բորիլյովի բանակովին : Այսոր Զեր-  
ժինսկու անվան գործարանի դիրեկտոր ընկեր Մանայենկովը


գործարանի անունից ուղարկած հեռագրում սկաշտպանում ե  
իր հոետորին, և հաստատում, վոր գործարանը կկատարի  
ընկեր Դեկտյարովի խոստումը վարարանի հատակի մի քա-  
ռասկուսի մետրից 12 տոնն ստանալու վերաբերյալ : (Ծափա-  
հարություն) :

Ի՞նչ ե վկայում սա : Սա վկայում ե, վոր մենք հսկա-  
յական հնարավորություններ ունենք :

Ես այստեղ ինքնաքննազատության կարգով պետք ե բա-  
նավեճի մեջ մտնեմ սև մետալուրգիայի գլխավոր վարչու-  
թյան գլխավոր ինքններ ընկեր Տոչինսկու հետ : Ահա, ըն-  
կեր Տոչինսկի, յերբ ձեզ հարց տվին, թե կարելի յե ար-  
դյոք սև մետաղաձուլման ասպարեզում հնդամյակը կատա-  
րել 4 տարում, դուք մեզ պատասխան չտվիք : Դուք դիվա-  
նագիտորեն խույս տվիք այդ հարցից և վկայակոչեցիք, վոր  
Ուրալում մենք ունենք մարտենյան հին հնոցներ հին գա-  
զոգեներատորներով և այդ հնոցներում հնարավոր չե հա-  
տակի մի քառակուսի մետրից ստանալ հինդ տոննից ավելի :

Ամենից առաջ, ընկեր՝ Տոչինսկի, այս տարի ամբողջ հին  
Ուրալը պետք ե տա ընդամենը 759 հազար տանն պողպատ :  
Դուք իհարկե չեք պնդի, թե այնտեղի բոլոր մարտենյան  
հնոցները հին են, անդրջրհեղեղյան : Բայց յեթե նույնիսկ  
մեր հաշվից ամբողջովին դուրս գցենք այդ 759 հազար  
տոննը, մնացած հնոցների մի քառակուսի մետր հատակից  
միջին հաշվով հինդ տոնն ստացվելու, գեղքումն ել պող-  
պատի հնդամյակը կկատարվի չորս տարում :

Տվյալ նորհրդակցության մեջ յես չեմ կարող խոստում  
տալ, թե անպայման չորս տարում կկատարենք պողպատի  
և գլուցածո մետաղի հնդամյակը, բայց յես վոչ մի կաս-  
կած չունեմ, վոր գոյություն տևնեցող հնոցներով ու դաշ-  
դյահներով տեխնիկապես հնարավոր և հնդամյակը վոչ  
միայն կատարել, այլև նշանակալի չափով գերակատարել  
չորս տարում :



Տեխնիկապես ու բացարձակորեն հնարավոր և և դուք այս պետք ե հայտարարելիք ուղղակի, վորպես ինժեներ; Իսկ թե ինչպես կազմակերպել այս գործը, ինչպես մորիկացիայի յենթարկել բանվորներին, այստեղ մեղ խիստ կողնի կուսակցությունը: (Ծափահարություն):

Նույն վիճակի մեջ ե նաև զլուցածո մետաղի գործը:

Այսպիսով պողպատի ու գլուցածո մետաղի հնդամյակը չորս տարում կատարելն այսոր վոչ թե տեխնիկական կարողության և «սահմանների» հարց և, այլ արտադրության ճիշտ կազմակերպման և այս կարողության ճիշտ տպառ գործման հարց:

Մի չարք գործարաններ, ինչպես որինակ՝ Մակեյլիլայի գիրովի անվան, Զերժինսկու անվան և Յենակիյևոյի գործարաններն արդեն պարտավորություն են ստանձնել հընդամյակը կատարելու չորս տարում:

Համենայն դեպք վոչ մի տարակույս չկա, վոր սև մետաղաձուլման հնդամյակը կատարվի 1937 թվականի վերջերից շատ ավելի վաղ:

Մենք, ընկեր Տոչինսկի, ձեզ հետ միասին, լավագույն պողպատագործների, դպանիչների, հնոցավարների աշխատավայրեալ գործությունների, պատույարացների և արտանքը պետք ե ուսումնասիրենք, պատույարացների և արտասահմանք բոլոր գործարաններում, ամենեին չքաշվելով մատացնենք բոլոր գործարաններում, այն բանից, վոր այդ մի քիչ կտարբերվի այն նորմաներից, այն բանից, վոր այդ մի քիչ կտարբերվի այն նորմաներից, այս դրոնց մինչև այժմ սրբազնութել եր թեորիան: (Ծափահարություն):

II ՄԻԱՅՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԵՐԿՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԱՅՍԹԻՍԻ ՍԱՐԴԻԿ

Բնկերներ, ստախանության շարժումը յուրահատուկ խորհրդային, սոցիալիստական յերկույթ ե:

Կապիտալիստական աշխարհում բանվորը յերբեք չի աշխատի այնպես, ինչպես աշխատում ե այստեղ, մեզ մոտ:

Կապիտալիստական աշխարհը չի կտրող Ստախանության բանվորը առալ:

Յեվ յեթե այնուեղ ստախանության դոնվեր, նա ամենից վոչ ժողովրդական մարդը կլիներ բանվորական ամբողջ մասսայի մեջ, վորովհետեւ աշխատանքի արտադրողականության այսպիսի մեծ աճումը կհանդեր այն բանին, վոր բանվորների առնվազն մի յերբորդը, գուցե և կեսը, կարձակվեր, և կավելանար գործազրկությունը: Այսուեղ պերլատարները շահագրղումած չեն ամեն ինչ քամել մեքենաներից, վորովհետեւ այդ դեպքում վոմանց կկրծատեն, իսկ վոճանց գնահատումները կնշաղեցնեն:

Իսկ մեզ մոտ ստախանության ամենից այլելի ժողովրդականություն վայելող մարդիկ են բանվորների մեջ և նրանք, տալով աշխատանքի այսպիսի արտադրողականություն, առաջին մարդիկն են դառնում Խորհրդային Միության մեջ: (Ծափահարություն):

Երեկ այստեղ, յերբ յելույթ ունեցող ընկերներից մեկը հայտարարեց՝ կեցցե՛ առաջին ստախանության ընկ. Ստալինը, ամբողջ գումարմբ վոտքի կանգնեց: Տեսնում եք, դուրս ե գալիս, վոր վոչ թե Ստախանության և ստալինյան, այլ Ստալինն ե ստախանության: Ահա թե ինչպիսի բարձրության են հասցնում բանվորներն ստախանության կոչումը: (Ծափահարություն):

Ել վո՞րտեղ, վո՞ր յերկրում կարող ե լինել այդ: Վո՞չ մի տեղ:

Այս կորող ե լինել միմիայն այնտեղ, վորտեղ աշխատանքը դառնում է պատվի գործ, վատքի գործ, արիության ու հերոսության գործ, ինչպես ասել ե ընկեր Ստալինը: Միմիայն սոցիալիզմի յերկրում կարող են լինել այդպիսի ժարդիկ: Ահա յերեկ այստեղ հանդես յեկան ընկերներ Նինա Սլավնիկովան և Սարույտ Մակարովան: Նրանց ծափահարությունը և ամբողջ յերկիրը: (Յերկարանի ծափահարություն):

քյուն): Ել վո՞րտեղ կարող ե լինել այդ, վո՞ր յերկրում: Միմիայն մեր, Առոհրդային Միության մեջ: (Ծափահարություն):

Այն պատճառով, վոր բոլորն ել զգում են, բոլորը հասկանում են, վոր աշխատանքի արտադրողականության այն աճումը, վոր տալիս են ստախանովականները, մեր յերկիրը դարձնում ե ուժեղ, հարուստ, հզորը, անպարտիլ, վոր դրանով բանվորն ինքը հսկայական չափով ավելացնում է իր աշխատավարձը, ավելի ունեոր ե դառնում և բարձրացնում ե իր կուլտուրական մակարդակը: Յեզ միւնույն ժամանակ նա շատ լավ դիմե, վոր նրան վոչ մի գործադրկություն չի սպանում, վորովհետև մեր յերկրում դեռ պետք ե նորանոր ձեռնարկություններ կառուցել, ել ավելի ածուխ հանել թե Դոնբասում, և թե մյուս բոլոր ավագաններում:

Մեզ պետք կլինի վոչ թե մի հարյուր միլիոն տոնն ածուխ, այլ շատ ու շատ հարյուրավոր միլիոն տոններ: Յեզ վորքան ավելի շատ ստախանովականներ լինեն, այնքան շուտ կլուծենք մենք այդ ինդիրը:

Ինչպես ընդունվեց ստախանովյան շարժումը: Առեյոք բոլո՞րն ել միանդամից հասկացան այդ շարժումը: Յես այստեղ պետք ե ուղղակի մատնանշեմ միքանի ընկերների: Յերբ յես սկսեցի հարց ու փորձ անել միքանի տնտեսավարների, թե ինչ են անում նրանք, ինչպես են կիրառում ստախանովյան մեթոդը, ապա այսպիսի պատասխան ստացա—մենք ծրագիրը կատարել ենք դեռ Ստախանովից ել առաջ և ստախանովյան շարժումը մեզ չի վերաբերում՝ դա ածխադործների բանն է: Մի ընկեր նույնիսկ ասաց, թե դա յերեխ արհմիությունների գործն է, թե նրանք պետք ե պրոպագանդ անեն այդ շարժումը: (Ծիծաղ դասինում): Բոլորը չե, վոր իսկույն բմբոնել են, իսկույն կուահել, թե բանն ինչումն է, բոլորը չե, վոր ցուցաբերել են անհրաժեշտ ճկություն ու շարժունություն: Ժամա-

նակին հենց այսպես եր, յերբ Մակեյեվկայի գործարանի դիրքեկտորը ընկ. Գվախաբիան բարձրացրեց շահաբերության անցնելու հարցը: Շատ շատերն անհնարին ելին համարում այդ: Իսկ այժմ գործը գլուխ յեկալ: Ամբողջ հարավյային մետալուրգիան և «Սպեցտալի» բոլոր գործարանները ներկայումս արդեն աշխատում են առանց դուտացիայի:

Ճիշտ ե, ուստական մի բուռ խղճուկ սպիտակ-դվարդիական վտարանդիների պարագլուխ Միլյուկովը գրել եր՝ «Արտադրանքի ինքնարժեքի իջեցման վերաբերյալ այն բոլոր խոսակցություններից ու առաջադրանքներից, վորով այնքան ուժգին թափով զբաղված են այժմ Մոսկվայում, գործնական վոչինչ դուրս չե գա... Նրա (խոհհրդային արդյունաբերության) վնասաբերությունն անպայման արետք ե ամի: Դուտացիաների ավելացումից հրաժարվելը կհասցնի կրախի»:

Յեզ ահա, ինչպես տեսնում եք, մենք կրախի յենք հանգել... (ծիծաղ):

Ահալասիկ այս ամբողջ նիստը վկայում է, վոր մեր ամբողջ արդյունաբերությունը սոսկալի կրախ ե կրել: (Ծիծաղ):

Մակեյեվկա-դվարդիական Միլյուկովը կարող է հրճվել: (Ծիծաղ, ծափահարություն):

Հնկ. Մոլոտովն այստեղ խոսեց—և միանգամայն իրավացիորեն խոսեց—Դյուկանովի, վորպես հիանալի աշխատողի, վորպես հիանալի բոլշևիկի մասին, վորն ստախանովական շարժման կազմակերպիչներից մեկն է: Յես նրան պետք ե ավելացնեմ նաև այդ հանքահորի կուսկոմիտեյի քարտուղար ընկ. Պետրովին ու տեղամասի պետ ընկ. Մաշորովին:

Ընկերներ, յես առանձնատպես պետք ե նշեմ մեր կուսակցության Դոնեցի մարդային կոմիտեյի դերը, վոր բոլշևիկիյան, ստալինյան հաստատակամությամբ զմապալեց:

այդ շարժումը և, մանավանդ, պետք ե ընդգծեմ Դոնեցի մարզային կոմիտեի քարտուղար ընկ. Սարդիսովի (ծափահարություն) և յերկրորդ քարտուղար ընկ. Վոյնովի դերը: Յես այստեղ պետք ե ասեմ, վորապեսդի դուք բոլորդ և ընկ. Ստալինն իմանա, վոր Կաղիկեվկայի լրագիր «Կաղիելսկի Պրոլետարիյ»-ը և նրա խմբագիր ընկ. Կաղանը՝ մեր լրագրական լավ աշխատողներից մեկը, վորը հենց նույն վայրկյանին, յերբ ուեղի ունեցավ մեծապույն կարևորություն ներկայացնող այս փաստը—ընկ. Ստախանովի մուլճի զարկը, —այդ փոխադրեց իր լրագրի եջերը և փողահարեց ամբողջ Դոնեցասովը մեկ, ու այսուհետեւ դա տարածվեց ամբողջ յերկրում: (Ծափահարություն):

Ստախանովական շարժման ծավալման մեջ շատ մեծ դեր է խաղացել «Սոցիալիստիկսկիյ Դոնեցա» լրադիրը:

Ել չեմ խոսում մեր «Պրավդա»-ի և «Զա Ինդուստրիալի-դաշիու» լրագրի հոկայական ծառայության մասին, վորոնք հաստատակամ ու յեռանձագին կերպով պրոպագանդ են այս գործի համար: (Ծափահարություն):

Յես այստեղ չեմ խոսելու այն մասին, վոր և՛ Սոսկայի կազմակերպությունը, և՛ ընկ. Խրուչեվը, և՛ Լենինգրադի կազմակերպությունը, և՛ ընկ. Ժդանովը, և՛ Ուկրաինայի Կոմունիստական կուսակցության կենտրոնական Կոմիտեն, և՛ ընկ. Պոստիշեվն ու Կոուիորը մեծ աշխատանք են կատարել ստախանովյան շարժման կազմակերպման գործում: Բայց յես կուղեյի առանձնասապես ընդգծել Դոնեցաի կուսակցական կազմակերպության դերը, վորը հիանալի կերպով կազմակերպել ե այս գործը:

III ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱՑԱԿԱՆ ԵՆ—ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԴՐԱՆՔ  
ԼԻՎԻՆ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ

Ընկերներ, ընկ. Մորոտովն այստեղ խոսեց շինարարության մասին, վոր մեր շինարարությունը կաղում ե: Յես

նույնպես համարապում եմ, վոր կաղում ե, և շատ իրաւունք կաղում: (Ծիծաղ):

Մեր շինարարությունը մենք ամբողջ թարկով սկսեցինք ծաղվալել 1931 և 1932 թթ.: Այն ժամանակ մենք ունենական քիչ մեխանիզմ ունեցինք, ունեակցուամ ենք բահն ու ըլունդը, կացինն ու ձին: Այդ թանգ եր, բայց մենք ուրիշ ենք չունեցինք:

Բայց այժմ մենք ունենք հզոր ինդուստրիա, մենք ունենք փորձակած շինարարներ, և հին ձեռով կառուցելն արդեն աններելի յե: Այժմ մենք հնարավորություն ունենք մեքենայացնելու մեր շինարարությունը և ամբողջապես անցնելու կառուցման ամերիկյան մեթոդներին: Այդ թե՛ եժան կլինի և թե՛ արագ: Սրա համար մենք ունենք բոլոր հնարավորությունները: Շինարարության ասպարեզում մենք հսկայական ռեզերվներ ունենք: Աշխատանքը և կառուցման գործը սահատած կերպով կազմակերպելու դեպքում մենք այստեղ կարող ենք իջնենել շինարարության արժեքը վոչ միայն 8 տոկոսով, այլև 3 անդամ 8 տոկոսով:

Գեոք ե ուղղակի առել, վոր, յեթե շինարարության մեջ 15—20—30 հազարական մարդ կա, այդ նշանակում ե, վոր մի քանի տոկոսը համարյա վոչինչ չի անում:

Զայն տեղից—ձի՛չտ ե:

Որջոնիկիան: —Մենք ունենք հոկայական տեխնիկական կարողություններ, և յեթե ինչպես հարկն ե կազմակերպել ստախանովյան շարժումը, ապա նոր մեծադույն հաջողությունների կհասնենք:

Ահա ձեզ միքանի ցայտուն արինակ կրիվորոժիեյի տվյալներ կյանքից, ալազան, վորը յերկրորդ հնարամյակը պատվով կատարեց 3 տարում:

Ահա թե ի՞նչ ե դրում այդ ավագանի ուլսաւոր ինժեներ ընկ. Զերնիկովը.

«Յեթե սրանից յերկու և կես տարի առաջ առեստի

զբաղված եր Զերժինսկայա Հանքային վարչության  
«Պերլոմայսկայա» Հանքահորի վերակառուցման նա-  
խադուկ, վրալեսովի նրա տեխնիկական կարողությունը  
հասցնի տարեկան 700.000 տոնն հանույթի, ապա ներ-  
կայում հանքահորն առանց վերակառուցման աշխա-  
տում և տարեկան 750.000 տոնն հանույթի մակարդակի  
վրա...»:

Իսկ ասում եյին, թե հարկավոր եր վերակառուցել և այդ  
ժամանակ կորեկի կլիներ առանալ միայն 700.000 տոնն:

Այսուհետեւ ընկ Զերնիկովն ասում ե, վոր՝

«Անցյալ տարի կագանովիչի անվան հանքային վար-  
չությունը հարց եր դնում փոխելու ընկ. Մոշիչնիոյի  
անվան հանքահորի վերհանիչ մեքենան, հանքահորի  
արտադրողականությունը տարեկան 350—400.000 տոնն  
հանույթի հասցնելու համար: Ներկայում այդ հանքա-  
հորը հին վերհանիչ մեքենայով աշխատելով մնում և  
400.000 տոննի մակարդակի վրա»:

Յեվ այսպիսի որինակները շատ շատ են:

Այսպիսի որինակները քիչ չեն նաև ուրիշ ճյուղերում:

Աչա այստեղ նստած ե № 37 գործարանի դիրեկտոր ըն-  
կեր Գուտնովը: Նրա գործարանից հանդես յեկան ընկ. ընկ.  
Սլավնիկովան ու Մակարովան, վորոնք ցույց են տվել աշ-  
խատանքի բարձր արտադրողականության նմուշներ, իսկ մի  
3 ամիս սրանից առաջ ընկ. Գուտնովն ինձանից պահանջեց  
լրացուցիչ զաղցյահներ այս տարիվա ծրագիրը կատարելու  
համար: Դաղցյահների մի մասը նա ստացավ: Իսկ այժմ  
ստախանույան շարժումը գործարանում ծավալվելու կա-  
պակցությամբ՝ ընկ. Գուտնովը հարապարակով մամուլում,  
աղնվորեն, բոլշևիկարար հայտարարեց, վոր վոչ միայն  
այս լրացուցիչ զաղցյահները հարկավոր չեն, այլև նա ա-  
վելորդ զաղցյահներ ունի: Նույն այդ բանը պատահել ել  
Տուլայի զինագործարանի ընկերներին, վորոնք այնքան ել

վաղուց չե, վոր նույնպես գանգատվում եյին դադիյահնե-  
րի պակասությունից, իսկ այժմ խոստանում են իրենց մոռ  
յեղած դադցահներով արտադրողականությունը բարձրա-  
ցնել 40 տոկոսով:

Հիմա, թանկագին ընկերներ, հարկավոր և ամենալուրջ  
կերպով վերանայել ասրբավորման արտադրողականության  
բոլոր հին հաշվարկները:

Այս, վերցրեք Մոսկվայի ընկ. Կաղանովիչի անվան «Շա-  
բիկովողշիպնիկ» գործարանը: Նրա նախագծային կարո-  
ղությունը, վոր թողել են խորացիները, տարեկան 24 մի-  
լիոն առանցքակալ ե, բայց պետք ե մատնանշել, վոր  
յերբ խորացիք հաշվում ու նախագիծ եյին կազմում, նը-  
րանք յենում եյին այն բանից, վոր խորհրդացին բանվորը  
չի կարող այնպես լավ աշխատել, ինչպես խորացին: Ուս-  
տի նրանք մեզ տվին մի նախագիծ, վորը հիմնված ե սար-  
քավորումն ոգտագործելու նվազեցրած նորմաների վրա:

Բայց ահալասիկ ընկ. Ցուսիմը, զարբնոցի ինժեներ-  
վարպետը, չի ուղում հաշտվել խորհրդացին բանվորներին  
ու տեխնիկներին խորացական Փիրմայի տված դնահատակա-  
նի հետ և նորմա հանդիսացող 28 հազար տղի փոխարեն մի  
հերթակիություն տվել ե 46—47 հազար ող: Նրան հետեւում  
են ընկ. Կոչեսկովը և ուրիշ վարպետներ:

Մենք գործարանի առաջ հարց ենք դնում՝ առանցքակալ-  
ները պակասում են, մենք հարկադրված ենք արտասահմա-  
նից ներմուծել, յեկեք հաշվի չնստելով գործարանի նախա-  
գծային կարողության հետ, վորն ակներևարար նվազե-  
ցրած ե, աշխատանքը կազմակերպենք ստախանութականու-  
րեն: Գործարանը կարող ե մեկ ու կես—յերկու անդամ ա-  
վելի տալ, իսկ դիրեկտորը հայտարարում ե, թե սրա հա-  
մար հարկավոր կլինի յերեք տարի: Ցես պատասխանեցի,  
վոր այդ կլինի յեկեռ տարի, միայն թե չըխտեմ՝ արդյոք

այդ զեկուլարությունն այնտեղ կլինի թե վոչ : (Ծափակաբարյալն) :

Են խորապես համոզված եմ՝ «Շարիկոպողչիոնիկի» բանվորների հետ միասին, այդ դործարանի լավագույն ինժեներական միավորների հետ միասին, կուսակցական կազմակերպության դլամբորությամբ—մենք այդ դործը դլուխ կրեցնք և այսպես կոչված նախակծային կարողություն հանդիսացող 24 միլիոն տուանցքակալի փոխարեն կտանք 36 միլիոն և ավելի : (Ծափակաբարյալն) :

Ահա թե, ընկերներ, Հարցն ինչպես և դրված :

Հնարավորությունները հսկայական են, բայց Հարկավոր ե գործն այնպես կազմակերպել, վորապեսդի դրանք լիովին սղառադորձվեն : Այս դործը կազմակերպելն այնքան ել հեշտ չեղաւ :

Սրա համար արտադրության կազմակերպման դործը պետք է ձեռնարկել նոր ձեռվ, ձեռք քաշելով այն վաս սովորությունից, վոր իբր դուք ամեն ինչ դիմեք : Հարկավոր ե ավելի շատ ականջ զնել տուաջավոր բանվորների ձայնին ու սովորել նրանցից : Սրանում ամոթավի վոչինչ չկաւ :

Նայեցեք ահա, թե ինչ հիանալի բանվորներ յելույթ ունեցան այստեղ : Խղճով ասած, յեթե գուք նրանց Հարցնեք, նրանք տիբան ել կտրականապես չեն հրաժարվի և մի քիչ օսվլորելով՝ հաջողությամբ կփոխարինեն ձեզ : Ձեր հանգեց, ընկեր անտեսավարներ ու ինժեներներ, խիստ շատ, չափազանց շատ կոնկուրենտներ են անել, և սա մեր բարեխատությունն է : (Յերկարատև ծափակաբարյալն) :

Բայց յես այնուամենայիլ կարծում եմ, վոր մեր տնտեսավարների ու մեր ինժեներների լավագույն մասը—իսկ դրանք ահապես մասսա յեն, դրանք, վոր Լենինի-Ստալինի մեր մեծ կուսակցության ղեկավարությամբ կառուցել են մեր հիանալի ինդուստրիան, —դրանք ստախանովյան շարժ-

ման դլուխ կկանգնեն և կկազմակերպեն այն : Համենայի դեպս ավելի լավ ե, ընկերներ, լինել առաջավոր շարքերում, քան թրե գալ զումակում, կամ թե բոլորովին դուրս նետվել :

Հիմա դա ձեր գործն ե—լմտրեցեք, ինչպես ուզում եք : (Միծաղ, ծափակաբարյալն) :

Հարկավոր ե ուղղակի ասել, վոր այս աեսակետից չառ մեծ վտանգ ե սպանում Դոնբասի—ե վոչ միայն Դոնբասի, —մեր ածխաղործ-տրեստայիններին, յեթե նրանք արագու վճռական կերպով ամբողջապես ու լիովին վերջ չտան իրենց հետամնացությանն ու պահպանողականությանը : Ո՞ւմ հայտնի չեն Դոնբասի ածխաղործ-տրեստայինների մշտական դանդաստները բանվորների պակասությունից, կոմպրեսորների պակասությունից և այլն : Իսկ այժմ այն գեղքից հետո, յերբ ընկեր Ստախանովին ամուր զարկեց իր մուրճը, կույրի համար ել պարզ ե, թե բանն ինչումն ե : Այժմ մուրճերը վոչ միայն բառական են, այլև ավելցուկ կա, կոմպրեսորներն ել բառական են, բանվորներն ել բառական են : (Միծաղ, ծափակաբարյալն) :

Ամեն կասկածից դուրս ե, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացումը, արտադրանքը 2—3—4 անգամ ավելացնելը, ինչպես ընկեր Ստալինն եր ասում այդ, —մեր ձեռքին ե, մենք այժմ դիմենք, թե ինչպես դրան հասնենք : Անտարակուսելի յե, վոր ստախանովյան շարժումն այնպես և ամրացնում մեր յերկիրը, այնքան հզոր ե դարձնում նրան, վոր վոչ մի հիսուս, վոչ մի ճապոնական իմպերիալիստ չի կարող մտածել այն մասին, վորպեսդի ձեռք տա մեր խորհրդային հողի թեկուզ մի կտորին : Այդ բոլորովին լինելու բան չե : (Փոքրկալի ծափակաբարյալն, վորոնեց վերածվում են ովացիայի . բոլորը վատի յեն կանգնում : «ուռա՛» բացականչություններ) :

Ընկերներ, ծանր արդյունաբերությունն արտադրում ե

նակ այն ամենը, ինչ անհրաժեշտ ե մեր յերկրի պաշտպանությանը: Մանր արդյունաբերությունը կարմիր բանակին առաջավոր տեխնիկա յե մատակարարություն:

Ինձ թվում ե, վոր յես իրավունք ունեմ հայտարարելու ընկեր Ստալինին, կենտրոնական Կոմիտեյին և մեր կլիմ Վորոշլովին, վոր մեր Հսկաները, վորոնք դլմիվայր շուռ են տալիս այն ամենը, ինչ հին եր թե՛ նորմաներում և թե՛ դասագրքերում, —այդ Հսկաներն այժմ մեր հայրենիքի պաշտպանության այնպիսի միջոցներ կտան, վորպեսզի միանդամեց ջախճախենք բոլոր նրանց, ովքեր կմտածեն ձեռք բարձրացնել մեր յերկրի վրա: (Փոքորկալի, յերկարան ծափահարություն: «Կեցցե՛ Կարմիր բանակը»: Քանից հնչող «ուռա» կանչեր: Բոլորը վոտքի յեն կանգնում):

Բայց, ընկերնե՛ր, վորպեսզի յերկրի պաշտպանությունը դրված լինի ինչպես հարկին և պատշաճ բարձրության վրա, հարկավոր և մեր յերկրի պաշտպանության համար տալ վոչ միայն անհրաժեշտ քանակով, այլև բարձր վորակով գործիք: Վորակը վոչ մի գեղքում չի կարելի հակադրել քանակին: Ամբողջ խորհրդային արտադրանքը բարձրորակ պետք ե լինի: Իսկ մենք, ընկերնե՛ր, այս կողմից առայժմ կաղում ենք: Ստախանովյան շարժումն արտահայտվում և թե՛ քանակական և թե՛ վորակական տեսակետից: Ով ցանկանում ե ստախանովական լինել, չե՛ կարող տալ միայն քանակ, նա պետք ե տա վորակ, առանց որտ չկա ստախանովական:

Զայներ տեղից մեջ ե: (Ծափահարություն):

IV Մենք թեվակունել ենք ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Ընկերնե՛ր, մենք թեակոխել ենք Պարտացման նոր ՄՐԺԱՆ: Մենք հաղթել ենք:

Իսկ ո՞ւմն ենք մենք պարտական այս մեծ հաջողությունները:

Այս մենք պարտական ենք մեծագույն մարդուն, մեծ հանձարին—Լենինին: (Պատգամավորները վոտքի յեն կանգնում: Փոքորկալի ովացիա: Դրանից հետո ամբողջ խորհրդակցությունը մինչև վերջը վոտքի կանգնած է լսում ընկ. Որջոնիկիձեյի նառը):

Մենք Լենինին ենք պարտական այն, վոր նա կազմակերպեց կուսակցությունը, հաղթությունից գեպի հաղթություն տարավ նրան, անցկացրեց հոկտեմբերյան որերի միջով, անցկացրեց քաղաքացիական պատերազմի միջով՝ պաշտպանելով խորհրդային իշխանությունը: Մենք այս բոլորը պարտական ենք ընկեր Լենինին—բոլոր գարերի մեծագույն մարդկանցից ամենամեծին: (Փոքորկալի ովացիա: Դահլիճում յերկար ժամանակ չդադարող ծափահարություն):

Մենք պարտական ենք նրան, ով յեղել և Լենինի առաջին ոգնականը: Մենք այդ պարտական ենք Ստալինին: (Փոքորկալի ովացիա, «ուռա» կանչեր, «Կեցցե՛ ընկեր Ստալինը»):

Յերբ արևելքում հարկավոր եր յերկիրը սրաշտպանել կոլչակի հրոսակներից, Լենինն այնտեղ ուղարկեց իր Ստալինին, և կոլչակը ջախճախվեց: (Փոքորկալի ծափահարություն):

Յերբ հարկավոր եր խորհրդային պետությունը հարավում պաշտպանել Դենիկինից, Լենինն այնտեղ ուղարկեց իր Ստալինին, և Դենիկինը ջախճախվեց: (Փոքորկալի ծափահարություն):

Յերբ հարկավոր եր ջախճախել Յուղենիչին և պաշտպանել Լենինդրագը, Լենինն այնտեղ ուղարկեց իր Ստալինին և Յուղենիչը ջախճախվեց: (Փոքորկալի ծափահարություն):

Յերբ հարկավոր եր ջախջախել Վարնդելին, Լենինն այն-  
տեղ սպարկեց իր Ստալինին, և թշնամին ջախջախեց ու  
հետ շպրտեց Սև ծով՝ շնորհիվ ընկեր Ստալինի հանձարեղ-  
զեկավարության։ («Ուռա» կանչեր։ Ի պատիվ ընկեր Ստա-  
լինի սարքած ովացիան տեվում ե միքանի բռպե։)

Լենինի մահվանից հետո, յերբ հարկավոր եր պաշտպանել  
լենինիզը արոշկիստներից, զինովյելականներից, կամե-  
նելականներից և բոլոր յերանդների մյուս ուղորատունիստ-  
ներից, — կուսակցության գլուխի կանոնեց Լենինի գործի  
շարօնակող Ստալինը, վորը ջախջախեց լենինիզը բոլոր  
թշնամիներին և կուսակցություն ու յերկերը հասցեց  
մեծազույն հաղթությունների։ (Փոք-որկալի ովացիա։  
«Ուռա» կանչեր։)

Այդ սրիկանները, այդ գարշելինները, հեղափոխության  
այդ ջախջախված թշնամիններն իրենց սպարտության համար  
վրեժ առան մեղանից նրանով, վոր մեր շարքերից կորդե-  
ցին մեր լավագույն ընկերներից մեկին, մեր ամենասիրելի  
ընկերներից մեկին, — ընկ. Կիրովին, բայց բոլշևիկյան շար-  
քերը չերերացին։ Թող մեր սրտից արյուն կաթի, վոր  
Կիրովը մեր մեջ չէ, չկա Կիրովը, վոր կուսակցության  
17-րդ համազումարում այս ամբոխից տառամ եր՝ «ինչպես  
ուզում ես ապրել ու ապրել»։ («Դահլիճնում սպուրյուն»)։

Մեծ է կորուստը, բայց բոլշևիկյան կուսակցությունը,  
բոլշևիկյան յերկերը միշտ առաջ է գնում։ Յեվ վոչ վոք ու  
վոչինչ նրան չի կանոնեցնի։ (Յերկարան ծափահարու-  
թյուն)։

Ընկ. Ստալինն ինդուստրացրել է մեր յերկերը, խել այս,  
ընկերներ, այնքան ել հեշտ չեր։ Այնքան ել հեշտ չեր անել  
այն, ինչի մասին մենք այժմ խոսում ենք։ Այժմ կարելի յե  
հպարտանալ հաղթանակներով, բայց այդ հաղթանակներն  
ստանալու համար հարկավոր եր հաղթահարել բազմաթիվ  
խոչընդուներ ու դժվարություններ։ Բայց մեր որոշակա-

կիր եր ընկեր Ստալինը, և մենք Հաղթեցինք։ (Փոք-որ-  
կալի ծափահարություն)։

Յերբ 1931 թվի փետրվարին գումարվեց տնտեսակարների  
համամիութենական առաջին կոնֆերանսը, ընկեր Ստալինը  
Սյունագարդ գահին ամբոխից հայտարարեց՝ մենք  
50-100 առարով հետ ենք մնացեկ՝ այդ տարածությունը մենք  
վաղերով պետք է կտրենք 10 տարում։ Կամ մենք այդ կա-  
նանք, կամ մեզ կճգմնեն։

1931 թվին, յերբ արտադրական պլանի կատարումը վաս  
եր գնում, մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի  
գահին կայացած տնտեսակարների խորհրդակցության  
նիստում ընկ. Ստալինը, վոգեսրելու փոքը ինչ շփոթ-  
ված տնտեսակարներին, ասաց, վոր մեր ծրագրի  
ռեալությունը, այդ—կենդանի մարդիկ են, այդ—մենք  
ենք և դուք, և ավեց մեզ նշանավոր պատմական վեց  
պայմանները, վորոնք մեր գրոշն ենին, մեր ծրագիրը  
հաղթական պայքարում։

Յեվ այսոր, յերբ ստորին խավերից բարձրացել է ստա-  
խանովականների նոր մեծ շարժումը, այդ շարժումը,  
վորին գլխավորում է ընկ. Ստալինը, կընթանա յոթ մո-  
նանոց քայլերով։

Կեցցե՛ մեր մեծ լենինյան կուսակցությունը։  
Կեցցե՛ մեր բանվոր դասակարգը։  
Կեցցե՛ մեր ուսուցիչը, մեր առաջնորդ ընկեր Ստալինը։  
(Փոք-որկալի ծափահարություն, «Ուռա» կանչեր)։

«Ուռա» ընկեր Ստալինին։  
(Փոք-որկալի ծափահարություն։ Յերկարան ովացիա։  
«Կեցցե՛ Սերգո Ռիզոնիկիան»։ «Կեցցե՛ մեծ Ստալինը»։  
Ամբարձ դահլիճը յերգում և «ինտերնացիոնալ»)։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՈՐԳՈՆԻԿՈՃԵ—Յ

## ԴՈՆԲԱՍԻ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻՆ

Հեռագիր

ՍՏԱԼԻՆՈ, ԸՆԿ. ԸՆԿ. ՍԱՐԿԻՍՈՎԻՆ, ԹԱԺԱՆՈՎԻՆ

Ընկ. Ստախանովը և նրա որինակին հետեւած ընկ. Ընկ. Դյուկանովը, Տերեխինը Պողոբյակովը, Սովչեմկոն, Կոնցեդալովը, Խորուովը, Բարկովը, Ավրամենկոն, Ռվյամենիկովը, Ռազդկոն, Տուստոկովը, Նիկիտենկոն, Դալգոպոլովը, Գրիշինը, Գրաֆշենկոն, Կալգանովը, Տկաչենկոն, Խոադշենկոն, Կոլդոքան, Սկրեպիան, Մաշուրովը, և Ակսենովը տվիկ են Դոնբասի պատմության մեջ ռեկորդային ածխի հանույթ։ Ածխային Դոնբասի հերոսների՝ կուսակցական և վոչ կուսակցական բոլշևիկների այս նշանակալից շարժումը մի նոր փայլուն ապացույց ե, թե ինչպիսի հսկայական հնարավորություններ ունենք մենք և թե ինչպես հետ են մնացել կյանքից այն վայ-ղեկավարները, վորոնք հենց միայն որյեկտիվ պատճառներ են վորոնում իրենց վաստ աշխատանքը, վաստ դեկավարությունն արդարացնելու համար։

Այժմ ամբողջ հարցն այն ե, վոր այս ընկերների փորձի հիման վրա կազմակերպվի ածխահանման աշխատանքը և նոր բարձրության հասցվի աշխատանքի արտադրողականությունն ամբողջ Դոնբասում ու բոլոր ածխային ավագան-

ներում : Այս ընկերների աշխատանքը չուռ ե տալիս ած-խահատի արտադրանքի նորմաների վերաբերյալ բոլոր հին պատկերացումները : Տարակույս չկա, վոր նրանց որինակին կհետևեն ներհատող մեքենաների ու ելեքտրակիրների մե-քենավարները, ինչպես և թափիչներն ու ձիավարները, իսկ ճարտարապետական—տեխնիկական կազմը կդիմավորի և կկազմակերպի այս գործը :

Հարկավոր ե հենց այժմ ձեռնարկել հանքաքարը թափելու և նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը, վորպեսզի սա չխափանի հանքահատների աշխատանքը : Յետ չեմ թաղցնի, վոր իմաստ յերկյուղ եմ կրում, թե այս շարժումը քաղքենիական կասկածամտության կհանդիպի վորոշ հետամնաց դեկավարների կողմից, վորն իրականում կնշանակի սարուտած : Այսպիսի վայ-դեկավարներին ան-հապաղ պետք ե հեռացնել : Դոնբասը չի կարող չկատարել այս տարվա պլանը, իսկ առաջմ չկատարման սովորնալիքը կա : Ընկ. ընկ. Ստալինովի, Դյուկանովի, Տերեխինի և ուրիշների նշած ուղին Դոնբասի ածխագործների հաղթու-թյան ուղին ե :

Խնդրում եմ հաղորդել իմ յեղայրական վողջույնը ած-խային Դոնբասի նշանավոր մարդկանց, վորոնք գործնապես իրականացնում են մեր կուսակցության առաջնորդ մեծ Ստալինի այն ցուցումները, վոր սոցիալիստական յերկրի տեխնիկային տիրապետած մարդկի հրաշքներ կարող են գործել :

## Ս. ՈՐՁՈՆԻԿԻՉԵ

12 սեպտեմբեր 1935 թ.

## ՀՐԱՄԱՆ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ

№ 1069

18 սեպտեմբերի 1935 թ.

Մեխանիզմների նշանակալիորեն լավ ողտագործումը, աշխատորվա ավելի լուրջ բեռնավորումը աշխատանքի ճշշտ-բաշխման հիման վրա հնարավորություն տվին ընկ. ընկ. Ստալինովին, Դյուկանովին և ուրիշներին ցույց տալու աշխատանքի բարձր նմուշները, միքանի անդամ բարձրաց-նելու արտադրական նորմաները և սրա համապատասխան նշանակելի չափով բարձրացնելու իր աշխատավարձը :

Շատ թեք ու թեթև զարիվայր ունեցող բոլոր հանքահո-րերում ստախանովյան մեթոդի արագ արմատացումն ու արտադրական բոլոր պրոցեսների, առանձնապես հանքա-քարը թափելու և նախապատրաստական աշխատանքների ճիշտ կազմակերպումը հանքահորում ինչպես Դոնբասի, այնպես ել մնացած բոլոր ածխային ավաղանների առջև ճանապարհ են բացում դեպի հանույթի հետագա խիստ վերելքը, դեպի ածխի ինքնարժեքի իջեցումը և միաժամա-նակ ածխարդյունաբերության աշխատողների աշխատա-վարձի բարձրացումը :

Յեղնելով սրանից և նպաստակ ունենալով անպայման կա-տարել 1935 թ. սլամն ու ապահովել ածխահանման հետա-գա ծավալումը 1936 թ., հրամայում եմ :

1. IV յեռամսյակի համար ածխահանման պլանը Դոն-բասում սահմանել 20 միլ. տոն:

Ածիային գլխավոր վարչության՝ այս պլանը բաշխել ըստ  
տրեստների ու առաջատար հանքահորերի:

«Զա ինդուստրիալիզացիոն» լրագրին՝ տվյալներ հրատա-  
րակել տրեստների ու առաջատար հանքահորերի կողմից  
պլանի ամենորյա կատարման մասին:

2. Ածիային գլխավոր վարչությանն ու Դոնբասի ածխա-  
յին տրեստներին՝ սեպտեմբերի ու հոկտեմբերի ընթացքում  
ստախանովյան մեթոդը տարածել բոլոր հանքահորերում,  
ափահովելով աշխատանքի կազմակերպական և արտադրա-  
կան—տեխնիկական անհրաժեշտ պայմանները, անողոք  
պայքար մղելով աշխատանքի ստախանովյան մեթոդի բոլոր  
բացահայտ և թաղնված ասբոտաժավորների դեմ:

3. Կաղիեվուգով տրեստի կառավարչի տեղակալ ընկ.  
Պոպովին, վորը փոխանակ ամեն կերպ աջակցելու և կեն-  
սագործելու ստախանովյան մեթոդը, ինքնահեռացում և  
կատարել այս գործից, հեռացնել գրաված պաշտոնից, փո-  
խադրելով ավելի ցածր պաշտոնի:

Կաղիեվուգովի բրյանսկի հանքային վարչության կառա-  
վարիչ ընկ. Վիսեցկուն, իբրև պլանի կատարումը չափա-  
հովողի, փոխադրել հանքահոր՝ ավելի ցածր պաշտոնի:

Բուղյոնովսկի հանքային վարչության կառավարիչ ընկ.  
Պոգրեբնյակին Դոնբասին ուղղված իմ № 840 հրամանն  
անբավարար կատարելու համար փոխադրել իբրև կառա-  
վարչի պարտականությունների ժամանակավոր կատարող:

Ընկ. Բաժանովին՝ յերկու տասնորյակ հետո նորից  
ստուգել Բուղյոնովսկի հանքային վարչությանն ուղղված  
հրամանի կատարումը և արդյունքները զեկուցել ինձ:

Նախազուշացնել կաղիեվուգով և Մակենեվուգով տրեստ-  
ների կառավարիչներ ընկ. ընկ. Վասովին և Ռեվիլին, վոր  
յեթե նրանք մի ամսվա ընթացքում չափահովեն ծրագրի  
կատարումը, նրանք կհեռացվեն իրենց գրաված պաշտոնից:

ԽՍՀՄ ծանր արդյունաբերության  
ճաղավական կոմիտար՝ Ս. ՈՐՁՈՂԻԿԻՋԵ

## ԱՎՏՈՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԻՆ

Հեռագիր

ԳՈՐԿԻ, ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎ. ԱՎՏՈԳՈՐԾԱՐԱՆ

Ածխահատ վարպետ ընկ. Ստախանովը և Գորկու Մոլո-  
տովի անվան Ավտոգործարանի դարբին ընկ. Բուսիգինը,  
հետևելով մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի  
կոչին տեխնիկային տիրապետելու վերաբերյալ, ցույց  
տվեցին, թե ինչպես պետք է իրականում տիրապետել  
տեխնիկային և թե ինչ հսկայական հնարավորություններ  
ունի մեր արդյունաբերությունը:

Ընկերներ Ստախանովն ու Բուսիգինը ցույց տվին, թե  
ինչ արժեք ունեն աշխատանքի բաժինների ու Տարիֆային-  
նորմավորման բյուրոյի մեր բյուրոկրատների այսպես կոչ-  
ված «տեխնիկապես հիմնավորված նորմաները»:

Ստախանովն ու Բուսիգինը ցույց տվին, վոր մենք իրոք  
կարող ենք յերկու-յերեք-չորս անշամ ավելի արտադրանք  
ստանալ՝ մեր մեքենաները, մեր տեխնիկան հմտորեն ոգ-  
տագործելով: Սա ապացուցել են Ստախանովը, Բուսիգինը,  
նրանց հարյուրավոր ու հզարավոր հետևորդները մեր  
արդյունաբերության զանազան ճյուղերում: Սա անվիճե-  
լիորեն այսպես է:

Այժմ ինդիրն այս չափամանը մատայական բնույթ տան  
է, կազմակերպել մասսայական ստախանովյան—բուսիգի-

նյան շարժումը ծանր արդյունաբերության բոլոր ճուղերում, —սա նրա հրամանատարների խնդիրն է:

Բայց այստեղ չպետք է աչք փակել հետևյալն վրա. վումանք ներքեւից յեկող այս շարժմանը վերաբերում ևն բուրոկրատաբար, արհամարհանքով. «ովքե՞ր են Ստախանովը, իուսիգինը, ի՞նչ են հասկանում նրանք»: Մրանք բյուրոկրատներ են, —ստախանովյան շարժման անուղղելի թշնամիներ: Այսպիսիներին պետք է սրբել ստախանովյանը բուրոկրատան հերոսական ճանապարհոց: Մյօւսները, շմած ստախանովյան մեթոդի տարրական պարզությունից, վորհանդիսանում ե աշխատանքի ճիշտ բաշխումը, իր մեքենաների ու աշխատորդական լրիվ ոգտագործումը, —դեռևս դիտում են և չեն դիմում այս մեծ գործի կազմակերպմանը: յերրորդները վախենում են, թե ստախանովյան գործը կմեծացնի արտադրանքի պլանը: Զե՛ վոր մեծացված ե Դոնբասի ածխահանման պլանը, —ասում են այս բյուրոկրատները: իհարկե, մենք մեծացրել ենք պլանը և ճիշտ ենք արել:

Ստախանովյան շարժման լավ կազմակերպումը Դոնբասում կարող ե Դոնբասին առաջին տեղը հանել ամբողջ ծանր արդյունաբերության մեջ և հնարյավորություն ե տալիս նրան յերկրորդ հնդամյակի պլանը կատարելու չորս տարում, հսկայական բարձրության հասցնելով աշխատանքի արտադրողականություն ու բանվորի վաստակը:

Այն բանից հետո, յերբ Ստախանովն ու Բուսիգինը ցույց տվին, թե ինչպես կարելի յետենիկայից քամել առավելավելին, թե ինչպես կարելի յետենիկայից քամել առավելավելին, —ամբողջ գործը կախված է արդյունաբերության հրամանատարներից:

Վարպետները, տեխնիկները, ինժեներները, գլուխավոր վարչությունների ու տրեստների պետերն ու բոլոր տնտեսավարները բոլոր կուսակցական ու արհեստակցական կազմակերպությունների հետ միասին պետք է բոլոր ճուղերում:

ստալինութեն դիմեն ստախանովյան—բուսիգինյան շարժման կազմակերպման գործին բոլոր գործարաններում, հանքահորերում, հանքերում, նավթահանքերում, ելեկտրակայաններում—ծանր արդյունաբերության բոլոր ձեռնարկություններում:

Այնպես, ինչպես Սակեյեվի մեթոդը հսկայական հաղթանակներ բերեց ու մետալուրգիային, —ստախանովյան—բուսիգինյան մեթոդը ել ավելի վիթխարի հաղթանակների կհանդի ծանր արդյունաբերության բոլոր ճուղերում, և վոչ միայն ծանր արդյունաբերության, այլև ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ:

Ստախանովյան—բուսիգինյան մեթոդը մեղ ընդհանուր մոտեցնում է մեծ լենինի լոկունգի իրականացմանը, վորե, հասնել և առաջ անցնել Յելրոպայի ու Ամերիկայի տեխնիկա—տնտեսական տեսակետից առաջավոր յերկրներից:

Ստախանովյան—բուսիգինյան շարժման կազմակերպման մեջ հսկայական նշանակություն ունեն մեր տեղական կուսակցական կազմակերպությունները: Առանց նրանց ակտիվ աջակցության ստախանովյան շարժումը չի կարող հաղթել: Միայն չորհիվ մեր կուսակցության Դոնեցի մարզկոմի հրաշալի ու յեռանդուն աշխատանքի ստախանովյան շարժումը կազմակերպելու գործում և ստախանովյան շարժման թշնամիներին հասցրած նրա ջախջախիչ հարվածի, —նա կածի ու կտառնա համամիտութենական շարժում:

Վողջունելով ավտոտրակտորային արդյունաբերության ստախանովյան—բուսիգինյան շարժման հավաքին, լիակատար չափով վատահ եմ, վոր բանվորները, վարպետները, տեխնիկները, ինժեներները, դիբեկառորները, տրեստների կառավարիչները, գլխավոր վարչությունների պետերը ծանր արդյունաբերության բոլոր ճուղերի բոլոր տնտեսավարները, կուսակցական և վոչ կուսակցական բոլոր իկները, հետեւելով մեծ Ստալինի կոչին, կազմակերպ-

Քած ձեռվկ իրենց ճեռմարկություններում արմատացնելով  
աշխատանքի ստախանովվան—բուսիդինյան մեթոդները,  
ցույց կտան արտադրության և աշխատանքի արտադրողա-  
կանության բարձր կազմակերպության նոր նմուշներ :

Մեր առջեւ, ընկերներ, ընդհուպ խնդիր ե ծառացել, թե  
ինչպես գործնականորեն վոչ միայն հասնել, այլև առաջ  
անցնել Յելրոպայի ու Սմերիկայի կապիտալիստական  
յերկիրներից և լենինյան—սոտալինյան կուսակցության  
կենտրոմի ղեկավարությամբ համարձակ կերպով առաջ  
գնալ մեր սոցիալիստական ուղղով, Լենինի—Ստալինի  
ուղիով :

Առաջ դեպի բնության ուժերի ավելի ու ավելի մեծ  
յենթարկում՝ նրանց մեր մեծ Սոցիալիստական Հայրենիքի  
աշխատավորներին ծառայեցնելու համար :

#### Ս. ՈՐՉՈՆԻԿԻՑ

10 հոկտեմբերի 1935 թ.



ЧИСЛО 40 ч.

ЦЕНА 40 к.



С. ОРДЖОНИКИДЗЕ

Стахановское движение возглавляемое великим  
Сталиным, пойдет семимильными шагами

Архипартиздат, Эривань